ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎԱՐԿԻ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿ «ԴԻՍՔԱՎԸՐԻ» ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

HSBC Բանկ Հայաստանը Ձեզ է ներկայացնում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Սիարոնյան 2 փողոցում գտնվող «Դիսքավըրի» բնակելի համալիրից բնակարանի ձեռքբերման հիփոթեքային վարկի հատուկ առաջարկ:

Բնակելի համալիրի մասին

Համալիրը բաղկացած է լինելու առանձնացված մուտքերով 5 մասնաշենքերից, որոնց ներքևի հարկերում լինելու են հասարակական տարածքներ և ստորգետնյա երկհարկանի ավտոկայանատեղի: Բնակելի համալիրի շենքերի երեսպատումը բնական քարերից է լինելու, իսկ ջեռուցման համակարգն՝ անհատական:

Շենքերը շահագործման են հաձնվելու.

- ներքին բաժանումները արված,
- հատակը հարթեցված,
- դռները և պատուհանները տեղադրված:

Համալիրին հարակից գործում են.

- մանկապարտեզ,
- դպրոց,
- սուպերմարկետ,
- դեղատուն,
- զբոսայգի:

Վարկավորման հիմնական պայմաններ

Արժույթ	ՀՀ դրամ
Տարեկան անվանական տոկոսադրույք	12.5%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	13.48% - 16.12%
Վարկի գումար[1]	5 մլն - 200 մլն ՀՀ դրամ
Վարկի ժամկետ[2]	24 - 240 ամիս
Վարկ/ գրավ հարաբերակցություն[3]	Գույքի արժեքի մինչև 90%
Կանխավճար	Սկսած 10%-ից
Վարկի տրամադրման միանվագ վճար	Վարկի գումարի 0.5%, առավելագույնը՝ 200,000 ՀՀ դրամ
Վաղաժամկետ մարման տուգանք	Չի կիրառվում
Վարկի սպասարկման վճար	Չի կիրառվում

Վարկի անվանական տոկոսադրույքը հաշվարկվում է՝ Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքին գումարելով հաստատուն մարժա և տվյալ պահին կազմում է՝

9% + 3.5% = **12.5%,**

որտեղ՝

9%-ը Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է,
3.5%-ը՝ Բանկի հաստատուն մարժան:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վարկի անվանական տոկոսադրույքը լողացող է և կարող է փոփոխվել մանրածախ հաշվարկային տոկոսադրույքի (ՄՀՏ) փոփոխության դեպքում:

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են տարեկան անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

ՀՀ դրամով անշարժ գույքի ձեռքբերման վարկի տրամադրման և սպասարկման ընդհանուր պայմաններին և կարևոր այլ բացահայտումներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.hsbc.am/pdfs/mortgages/residential-property-purchase-loan-amd/:

Գործող պայմանների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու նպատակով կարող եք այցելել նաև Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել +374 60 655 000 հեռախոսահամարով:

---

[1] Վարկի գումարի չափը կախված է նաև Բանկի կողմից սահմանված՝ վարկառուի ունեցած բոլոր վարկերի գծով մարումների և եկամտի հարաբերակցությունից:

[2] **Վարկառուի նվազագույն տարիքը պետք է լինի 18 տարեկան: Վարկառուի տարիքի և վարկի ժամկետի հանրագումարը չի կարող գերազանցել 65 տարին:**

[3] Կախված է տարբեր գործոններից, այդ թվում՝ գույքի գտնվելու վայրից (Երևանում/Երևանից դուրս), անշարժ գույքի ձեռքբերման վարկի դեպքում՝ նաև լրացուցիչ գրավի առկայությունից (գույք, գնման իրավունք և դրամական միջոցներ) և այլն: